

Փոխաբերության թարգմանությունը գրական երկում լեզվաճանաչողական դիտանկյունից

Նելլի Սարգսյան

Երևանի պետական համալսարան, Երևան, Հայաստանի Հանրապետություն
l. huugn` 25437ns@gmail.com

Paper received 25.01.22; Accepted for publication 13.02.22.

<https://doi.org/10.31174/SEND-Ph2022-264X77-12>

Լեզվաբանության, գրականագիտության, տեքստի մեկնաբանության և թարգմանաբանության բազում տեսություններ են նվիրված փոխաբերության՝ որպես առանձնակի լեզվաարտահայտչական միավորի, ինչպես նաև պատկերավոր մտածողության դրսևորման երևույթի ուսումնասիրությանը: Փոխաբերության բարդ կառուցվածքը և էությունը քննության առարկա է ոչ միայն լեզվաբանության տիրույթում, այլև փիլիսոփայության, հոգեբանության, ճանաչողաբանության և այլ գիտությունների բնագավառներում: Սույն հոդվածում մենք ձգտել ենք համապարփակ ներկայացնել փոխաբերության բնույթը և նշանակությունը մարդու մտածողության, խոսքի և լեզվի մեջ, ինչպես նաև քննարկել և վերլուծել ենք գրական երկերում փոխաբերության՝ այլ լեզուներով թարգմանության իրականացման առանձնահատկությունները, եղանակներն ու միջոցները: Փոխաբերության թարգմանությունը ենթադրում է թարգմանչի կողմից իրագործվող բարդ մտածողական գործընթաց, որի նպատակը փոխաբերության ինչպես հասկացության-ճանաչողական յուրահատկությունների, այնպես էլ ընթերցողի վրա գեղարվեստական-պատկերավոր ներգործության հնարավորինս լիարժեք փոխանցումն է աղբյուր լեզվից թիրախ լեզու: Այս հոդվածում առանձնակի ուշադրությանը և կորևորությանը են ներկայացվում փոխաբերության էության և թարգմանության վերաբերյալ լեզվաճանաչողական տեսությունները:

Բանալի բառեր. փոխաբերություն, թարգմանություն, ճանաչողական լեզվաբանություն, հասկացույթ, հասկացության ինքնակարգ, պատկերավոր մտածողություն, աղբյուր լեզու, թիրախ լեզու, տեքստի մեկնաբանություն:

Փոխաբերությունը համատարած է մեր առօրյայում, ոչ միայն այն առկա է լեզվի տիրույթում, այլ նաև մտքի և գործողության: Մեր հասկացության համակարգը, ըստ որի մենք մտածում և գործում ենք, իր բնույթով հիմնովին փոխաբերական է: Ջորջ Լակոֆ

Ներածություն. Գրական ստեղծագործության տեքստն այլ տեքստերից առանձնանում է իր լեզվով, լեզվաարտահայտչական և պատկերավոր տարրերի ամբողջությամբ, որոնց յուրահատուկ համադրման միջոցով հեղինակը հաղորդում է իր ինքնատիպ երևակայությունն ու աշխարհընկալումը: Փոխաբերությունը որպես լեզվական, գեղարվեստական և պատկերավոր տարր, հետաքրքրության է արժանացել և հետազոտվել լեզվաբանության, հոգեբանության, ճանաչողաբանության և մի շարք այլ գիտությունների բնագավառներում: Փոխաբերության էության մասին հնարավորինս համապարփակ պատկերացում կազմելու համար անհրաժեշտություն է առաջանում ուսումնասիրել ոչ միայն դրա արտաքին, լեզվական-ոճական բնութագրերը, այլև խորքային հասկացության կառուցվածքն ու դրսևորումները: Փոխաբերության վերաբերյալ հասկացության-ճանաչողաբանական մոտեցումները մեկնում են այն ոչ միայն որպես լեզվական երևույթ, այլև մարդու հասկացության համակարգի բաղադրիչ, որն իր հերթին մարդու ճանաչողության և աշխարհընկալման մեջ կատարում է հասկացությանացման և հասկացությաների դասակարգման կորևոր գործառնություն: Այդ առումով կարևորվում է նաև գրական տեքստում ընդգրկված փոխաբերության՝ այլ լեզուներով թարգմանության գործընթացի առանձնահատկությունների քննությունը:

Փոխաբերության թարգմանության եղանակների և այդ գործընթացում իրականացվող ճանաչողական-մտածական գործողությունների պարզաբանումը **նպատակ ունի** նպաստելու փոխաբերության՝ որպես գեղարվեստական-պատկերավոր բարդաբանական լեզվական երևույթի ճշգրիտ թարգմանության ապահովմանը: Փոխաբերության թարգմանության հետ կապված հետազոտությունները միտված են նաև բացահայտելու հեղինակի անհատական

մտածողությունը, լեզուն և աշխարհընկալումը:

Գրականության և կիրառված մեթոդաբանության ակնարկ. Սույն հոդվածի տեսական մասի հիմք են ծառայել Ջ. Լակոֆի, Մ. Ջոնսոնի, Ն. Մանդելշիտի, Ռ. Գալդինի, Տ. Հերմանի, Վ. Մապոլայի, Մ. Խորոդայայի, Ի. Սկոտնիկվայի, Յու. Կառաուլովի, Ի. Ռիչարդսի, Մ. Բլեքի և այլոց մշակված լեզվաբանական, լեզվաճանաչողական տեսությունները:

Մեթոդաբանական առումով այս ուսումնասիրության մեջ կարևորվում են լեզվաբանության, ճանաչողաբանության և հոգեբանության վերաբերյալ գիտական և ուսումնամեթոդական գրականության վերլուծությունը, քննարկվող թեմային առնչվող տեսությունների համեմատությունը, ինչպես նաև ներկայացվող ուսումնասիրությունների և մոտեցումների ընդհանրացումը, համակարգումն ու հիմնավորումը:

Քննարկում և արդյունքների ամփոփում.

Գեղարվեստական ստեղծագործության ստեղծման գործընթացում հեղինակի ներաշխարհն արտահայտող տարաբնույթ լեզվական միավորների և ոճաբանական հնարների մեծ բազմության մեջ առանձնակի ուշադրություն է գրավում փոխաբերությունը: Ինչպես պատմության մեջ առաջին անգամ բնութագրել է Արիստոտելը, փոխաբերությունը բառի բուն նշանակության փոխադրումն է մեկ այլ բառի վրա, ընդ որում՝ այդ տեղաշարժը կարող է ընթանալ ընդհանուրից դեպի մասնավոր, մասնավորից դեպի ընդհանուր, մասնավորից՝ մասնավոր և կամ ըստ համանմանության [Արիստոտել, 1955:35-36]:

Փոխաբերության տեղն ու դերը լեզվաբանության զարգացման ընթացքում չեն սահմանվել միայն լեզվագիտության մեկ հատակ բնագավառում: Ի հաշիվ փոխաբերության բարդ և միևնույն ժամ լիովին չբացահայտված բնույթի՝ փոխաբերության

ուսումնասիրման ոլորտը, ընդլայնվելով, լեզվաբանության տիրույթից ներթափանցել է հոգեբանության և ճանաչողաբանության բնագավառներ:

Անցյալ դարի 70-ականների վերջին և 80-ականների սկզբին մեծ տարածում ստացավ ճանաչողական լեզվաբանությունը, որում լեզուն դիտարկվում է որպես տեղեկության կազմակերպման, մշակման և հաղորդման միջոց. տվյալ ոլորտում լեզուն հանդես չի գալիս որպես առանձին ճանաչողական կարողություն, քերականությունը հասկացվում է որպես հասկացությանացում (կոնցեպտուալիզացիա) և լեզվի իմացությունը բխում է լեզվի կիրառումից [Geeraerts, Cuyckens, 2007:3]: Մարդու մտածողության էության, դրա գործադրման և հասկացման ձևաորման առանձնահատկությունների հետազոտության համար կորևորվում է մարդու մտազուգորդային մտածողությունը, մասնավորապես վերջինիս՝ փոխաբերություններ կառուցելու կարողությունը, որը հաճախ սահմանվում է որպես փոխաբերականացում (metaphorization):

Համաձայն Վ. Մալովայի՝ փոխաբերականացումը հիմնական մտածական գործողություն է, ըստ էության, աշխարհի իմացության և մեկնման գործիք, որը գործադրվում է նոր նշանակությունը հնի միջոցով արտացոլելու և առանձնացնելու համար [Мацова, 2016: 6]:

Փոխաբերություններն էական գործոն են հասկացություններն ու դրանց կարևորագույն բնութագրական գծերը մարդու մտածողության մեջ ընդգրկելու և սահմանելու համար, և հենց դրանց միջոցով են իրագործվում մտածողական գործընթացները:

Համաձայն Ջ. Լակոֆի և Մ. Ջոնսոնի՝ հասկացությունները, որոնցով դեկավարվում է մարդու մտածողությունը, պարզապես բանականության առարկաներ չեն: Դրանք կառուցում են այն ամենն, ինչն ընկալում է մարդը՝ ըստ իր՝ աշխարհի և այլ մարդկանց հետ հարաբերվելու յուրահատկության: Մարդու հասկացությանին համակարգը կենտրոնական դեր է խաղում առօրյա իրողությունների սահմանման մեջ: Հետևաբար, պատահական չէ Ջ. Լակոֆի և Մ. Ջոնսոնի այն համոզմունքը, որ մարդու հասկացությանին համակարգն իր բնույթով փոխաբերական է [Lakoff & Johnson, 1980:3-4]: Ճանաչողական լեզվաբանության մեջ առանցքային է այն գաղափարը, որ առօրյա խոսքի, գիտական դիսկուրսի, ինչպես նաև մտածողության և գործողության իրականացման միջոցների հիմքում ընկած է փոխաբերությունն իր տարատեսակ դրսևորումներով:

Փոխաբերության ուսումնասիրությունները սկիզբ են առել բացառապես լեզվի տիրույթում՝ բառիմաստի և գրավոր ու բանավոր խոսքի ոճական արտահայտման առանձնահատկությունների դիտարկումների և հետազոտությունների արդյունքում: Չարգացման հաջորդ փուլերում փոխաբերությունը հետաքրքրության և հատուկ ուսումնասիրության առարկա է դառնում տեքստի մեկնաբանության, այլ կերպ ասած՝ հերմենևտիկայի, ոլորտում [Գասպարյան, Մաթևոսյան: 2018]: Սակայն, այս բնագավառի հետազոտական սահմանների ընդլայնման հետևանքով փոխաբերությունն աստիճանաբար ուշադրության է արժանանում նաև փիլիսոփայության և այլ

գիտությունների դիսկուրսում: Լեզվաբանության զարգացման ներկա փուլում փոխաբերությունը չի կորցնում իր էության և արտահայտման հետ կապված խնդիրների արդիականությունը և ուսումնասիրվում է նաև ճանաչողական լեզվաբանության ոլորտում: Փոխաբերության՝ որպես պատկերավոր մտածողության արտացոլման միջոցի, ուսումնասիրությունները հաճախ իրականացվում են գեղարվեստական ստեղծագործության ոչ միայն հերմենևտիկ-քննադատական վերլուծության ճանապարհով, այլև գրական երկերի տարալեզու թարգմանությունների հետազոտման միջոցով:

Մի շարք լեզվաբաններ, ինչպես օրինակ՝ Ռ. Գալդինը, Տ. Հերմանսը և այլք, հետաքրքրության արժանի դիտարկումներ են արել փոխաբերության և թարգմանության փոխհատման դաշտում, քանզի նշված հասկացություններն ունեն որոշակի ընդհանրություններ, թեկուզև այն առումով, որ երկուսն էլ մատնանշում են իմաստի «փոխադրում, փոխանցում» [Hermans, 2004:118]:

Փոխաբերության տեսության զարգացման ընթացքում ակնհայտորեն գերիշխող է եղել իմաստների փոխադրման գաղափարը, որով, ըստ էության, սահմանվում էր փոխաբերության էությունը, սակայն հետզհետե փոխազդեցական տեսությունն աստիճանաբար վերաիմաստավորեց փոխաբերությունը ճանաչողական լեզվաբանության տեսանկյունից: Նմանատիպ զարգացմամբ է բնութագրվում նաև թարգմանության տեսությունը, որը հիմնականում շեշտադրում էր թարգմանված տեքստի՝ բնագրից կախյալ կարգավիճակի և հասկացությունների համարժեքության խնդիրները: Սակայն այս գաղափարները վերանայվեցին փոխակերպական լեզվաբանության դիտանկյունից, որն իր հերթին կարևորում էր թարգմանված տեքստի համեմատաբար առավել ինքնավար բնույթը, ինչպես նաև թարգմանության գործընթացում իրականացվող նոր փոփոխությունների անհրաժեշտությունը: Ինչպես թարգմանված փոխաբերությունները, որոնք միտված են ոչ թե գուտ արձագանքելու բնօրինակին, այլ վերարտադրելու այն [Guldin, 2016:7-9], թարգմանությունը նույնկերպ կոչված է վերաստեղծելու բնագիր տեքստն այնպես, որ ընթերցողին փոխանցի բնագիր տեքստի գեղագիտական ազդեցությունը:

Փոխաբերության և թարգմանության միջև ընդհանրությունները հստակորեն ներկայացրել է Ռ. Գալդինը.

1. և՛ փոխաբերությունը, և՛ թարգմանությունը երկակի հասկացություններ են (ունեն երկակի կառուցվածք),
2. կառուցվածքային տեսանկյունից փոխաբերությունը և թարգմանությունը, ունենալով երկակի կառուցվածք, ենթադրում են սահմանային անցում,
3. փոխաբերականացմամբ ստեղծված իմաստը ստորադասվում է ուղիղ, առաջնային իմաստին, որն այն ձգտում է մեկնել,
4. թարգմանությունը բնագիր տեքստին ածանցյալ ստեղծագործություն է և իր իմաստով կախված է բնագրից,
5. փոխաբերությունները հաճախ անորոշություն են ներմուծում նշանակյալի և նշանակչի միջև,
6. թարգմանության կարևոր հարցադրումներից է

լեզուների ինքնաներկայացման (ռեպրեզենտատիվ ինքնության) և միասնության առկայությունը, որի միջոցով բացահայտվում են բառերի, առարկաների և երևույթների միջև հարաբերությունները, այսուհանդերձ, արդյունքում թարգմանության գործընթացները բերում են այն եզրահանգման, որ բառերն ի վերջո միայն առարկաների և երևույթների փոխաբերություններն են [Richards, 1965:47-61],

7. և՛ փոխաբերությունը, և՛ թարգմանությունը կարող են որոշակի բացասական ազդեցություն ունենալ ընթերցողի վրա, քանի որ բացի իմաստի երանգի հստակեցման և մեկնման գործառնությունից, դրանք ենթադրում են նաև իմաստի աղճատում և մթազնում, [Guldin, 2019:18-21]:

Փոխաբերության վերաբերյալ ավանդական մոտեցումը մատնանշում է բառացի իմաստի փոխարինումը մեկ այլ իմաստով, որն էլ առանձնանում է որպես բառի փոխաբերական իմաստ: Այս առումով առաջադրվում է նաև փոխաբերական իմաստի՝ ընթերցողի կողմից ընկալման խնդիրը: Ինչպես նշում է Մ. Բլեքը, փոխաբերությունն ընկալելու համար ընթերցողը պետք է անցնի հեղինակի՝ փոխաբերության վերհանման ուղին հետադարձ ընթացքով և հասնի հարորդվող իմաստին [Black, 1954-55:293]: Փոխաբերության ընկալման խնդիրը կարևորվում է նաև գրական երկերում՝ դրանց թարգմանության տեսանկյունից, նախ և առաջ այն պատճառով, որ թարգմանչի աշխատանքը պահանջում է բնագիր տեքստի իմաստի և հեղինակի պատկերավոր լեզվի համապարփակ ըմբռնում:

Փոխաբերության ընկալման և թարգմանության հարցադրումները հատուկ տեղ են զբաղեցնում թե՛ գրական տեքստերի թարգմանության, թե՛ գրականագիտության և թե՛ բառիմաստների միջլեզվական համեմատական ուսումնասիրությունների բնագավառներում: Փոխաբերության թարգմանության վերաբերյալ առկա են բազում մոտեցումներ, որոնցից առանձնանում են Պ. Ռիկորի «փոխարինման» [Ricoeur, 2003] և Մ. Բլեքի փոխազդեցական տեսությունները [Black, 2004]: Համաձայն առաջինի՝ փոխաբերություններն անթարգմանելի են, և դրանց թարգմանությունն իրականացվում է բառացի համարժեքների միջոցով, մինչդեռ ըստ փոխազդեցական տեսության՝ փոխաբերությունների թարգմանության հիմնասյունն է համարվում արտահայտված պատկերավոր իմաստի հարորդումը թիրախ լեզվում առկա բազում խոսքային և լեզվական տարրերի միջոցով: Այս մոտեցումների շնորհիվ հնարավոր է դառնում ընդհանուր պատկերացում ձևավորել փոխաբերության թարգմանության գործընթացի և դրա իրականացման մեխանիզմի մասին: Այնուամենայնիվ, նշված մոտեցումները չեն բնութագրում այդ գործընթացի կայացման մեջ թարգմանչի գործադրած մտածողական, արտահայտչական կարողություններն ու հնարանքները, որոնք անխուսափելիորեն ներգրավվում են թարգմանության մեջ: Վերջիններիս կարևորությունը չի կարող աննկատ մնալ, քանի որ հենց անհատի մտածողական, լեզվաարտահայտչական կորողությունների միջոցով է ձևավորվում հասկացության, այնուհետև փոխաբերության ուրվագծումը հասկացության համակարգում և դրա սահմանազատումն ու տարանջատումն այլ տարրերից:

Փոխաբերությունների թարգմանության վերաբերյալ

առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում Ն. Մանդելբլիտի ուսումնասիրությունը, որի համաձայն՝ բնագիր լեզվից թիրախ լեզու փոխաբերություններ թարգմանելիս, կարևորվում է վերջիններիս հասկացության էությունը, և առաջնություն է տրվում Ջ. Լակոֆի և Մ. Ջոնսոնի մշակած հասկացության փոխաբերության տեսությանը: Ըստ Ն. Մանդելբլիտի մոտեցման՝ փոխաբերության վերաբերյալ ավանդական մոտեցումները, որոնք հստակ առանձնացնում են միայն նոր և «մեռած» տեսակի փոխաբերություններ, սահմանափակ պատկերացում են տալիս վերջիններիս բարդ և բազմաշերտ կառուցվածքի մասին [Mandelblit: 1995:485-486]: Այսպիսով, ավանդական մոտեցումները մակերեսորեն են ներկայացնում ոչ միայն փոխաբերության էության և կառուցվածքի ընդհանուր բնութագիրը, այլև փոխաբերությունների «թարգմանելիության» հնարավորությունը: Համաձայն Ն. Մանդելբլիտի՝ փոխաբերության հասկացության տեսությունը չի առաջարկում նոր և «մեռած» փոխաբերությունների հստակ սահմանազատում, որն իր հերթին ներկայացնում է փոխաբերությունը գուտ որպես «խոսքի զարդարանք», այլ փոխաբերելու կարևորում է փոխաբերությունը հասկացության սահմանման գործընթացում (կոնցեպտուալիզացիա) և դրա ճանաչողական գործառնություն մտածողության մեջ [Mandelblit, 1995:486-487]:

Փոխաբերությունը հասկացության համակարգում հանդես է գալիս որպես հասկացությունների քարտեզման համակարգ, որում առկա աղբյուր և թիրախ տիրույթներում տեղակայված հասկացությունները փոխազդեցական կապի մեջ են գտնվում իրար հետ: Հետևաբար, կարելի է ենթադրել, որ փոխաբերության՝ բնագիր լեզվից թիրախ լեզու թարգմանությունը պահանջում է դրա հասկացության համակարգման/քարտեզման հաշվառում: Փոխաբերության Ն. Մանդելբլիտի զարգացրած հասկացության և ճանաչողաբանական թարգմանության մոտեցումը ենթադրում է, որ թարգմանության գործընթացը խթանում է փոխաբերության հասկացության քարտեզման ակտիվացում թարգմանչի մտածողության հասկացության համակարգում [Mandelblit: 1995:485-486]: Այսպիսով, առաջադրվում է ևս մի գաղափար, ըստ որի՝ փոխաբերության թարգմանությունը ենթադրում է փոխադրում ոչ միայն մի լեզվից մյուսը, այլև աշխարհընկալման մի ձևից՝ մյուսը [Mandelblit: 1995:485-486]:

Փոխաբերությունների կարևորումը հասկացության արտահայտման համակարգում ներկայիս բանասիրական և թարգմանական տեսություններում նոր հիմնահարցեր է առաջ քաշում: Թարգմանչի առջև դրվում է ոչ թե բնագրում առկա փոխաբերական իմաստով արտահայտված բառերի և այլ լեզվական միավորների թարգմանության թիրախ լեզվում ճշգրիտ համարժեքներ հայտնաբերելու և ներկայացնելու խնդիրը, այլ բացահայտելու այդ փոխաբերության հասկացության դրսևորումների կերտվածքը, քարտեզումը և հարորդելու բնօրինակում ներկայացված առաջնային փոխաբերության իմաստը թարգմանության միջոցով: Այս կապակցությամբ հատկանշական է Ն. Մանդելբլիտի առաջարկած խնդրի վերակառուցման

մոտեցումը¹, որը կիրառելի է թարգմանության ընթացքում փոխաբերության կամ դրա զանազան այլ արտահայտումների հասկացությանը քարտեզումն ուրվագծելու գործընթացում: Մակայն, վերոնշյալ մոտեցումը սահմանափակում է թարգմանության իրականացման ընթացքում կիրառվող եղանակները, որոնք տարբեր թարգմանիչների մոտ տարբեր են:

Հայտնի է, որ յուրաքանչյուր անհատ առանձնանում է իր՝ տեղեկության ընկալման, դրա դասակարգման և տարբերակման ճանաչողական մեխանիզմների գործադրման եղանակներով և ձևերով: Վերջիններս, համադրվելով իրար հետ, կազմում են անհատի ճանաչողական ոճը (դաշտային կախվածություն/անկախություն, համարժեքության նեղ/այն դիսպազոն, դասակարգային ընդգրկունություն, հասկացությունների սահմանման կոնկրետություն/վերացականություն, ճանաչողական պարզություն/բարդություն և այլն), որը մեծ կարևորություն ունի անհատի հոգեկերտվածքի ձևավորման և կազմավորման մեջ [Либин, Холодная, 1998:55-63]: Ընդ որում՝ ճանաչողական ոճերից յուրաքանչյուրին բնորոշ է ճանաչողական խնդրի լուծման համար առանձնահատուկ ուղղվածություն: Ծանաչողական ոճերի հետ մեկտեղ տարբերում են նաև ճանաչողական ռազմավարություններ², որոնք հանդես են գալիս որպես տեղեկության մշակման և կիրառման եղանակների անհատականացված համակարգ՝ միտված ճանաչողական խնդրի լուծմանը [Либин, Скотникова, 1998:65-66]: Այսինքն, ճանաչողական խղիղների լուծման համար գործադրվում են մտածողության զանազան մեխանիզմներ, որոնք դասակարգվում են ըստ ճանաչողական ոճերի, իսկ առանձին ճանաչողական խնդրի լուծման համար գործադրվող մեխանիզմների համադրումը և կազմավորումը յուրահատուկ է և բնորոշ է անհատի հոգեբանական-ճանաչողական կերտվածքին: Հետևաբար, կարելի է ենթադրել, որ փոխաբերության թարգմանության՝ որպես ճանաչողական խնդրի, պարագայում կիրառելի կլինի ոչ թե մեկ հնար, ինչպես Ն. Մանդելբրիտն է առաջարկում, այլ մի քանի տեսակի ճանաչողական ոճերին բնորոշ կոգնիտիվ խնդիրների լուծման եղանակներ:

Համաձայն Ի. Ռեմիսեի՝ թարգմանչի մասնագիտական կարողությունը ներառում է մասնագետի անձի ինտեգրացված բնութագիրը, որն ընդգրկում է լեզվաբանական, հանրամշակութային, հոգեբանական և տեղեկատվական կարողությունները և թույլ է տալիս թարգմանչին իրականացնել իր գործունեությունը բարձր մասնագիտական մակարդակով [Ремхе, 2011:262]: Հղում կատարելով թարգմանչի անձնային բնութագրերին՝ հարկ է դրանց շարքում առանձնացնել նաև լեզվական բաղադրիչը, որի ուսումնասիրությանն անդրադարձել է Յու. Կառաուլովը՝ ներմուծելով «լեզվական անհատ» հասկացությունը: Նրա համոզմամբ՝ այս

հասկացությունը մեծ նշանակություն ունի ճանաչողական լեզվաբանության, ինչպես նաև թարգմանության վերաբերյալ ճանաչողական մոտեցումներում: Լեզվական անհատի մոդելը բաղկացած է երեք մակարդակներից, որոնք են՝ բառային և իմաստաբանական գույքորոշումներն ամբողջացնող վերբալ-իմաստաբանական մակարդակը, լեզվաճանաչողականը, որի տիրույթում է անհատի աշխարհընկալումը, «աշխարհի պատկերը», և մոտիվացիոն մակարդակը, որում ներկայացված են անհատի հաղորդակցական կարիքներն ու բնութագրերը՝ միտված տիպաբանելու անհատի խոսքային վարքագիծը [Караулов, 2010:38-39]: Թարգմանչի լեզվական անհատի մեջ խտացված է լեզուների, մշակույթների, մասնագիտական հասկացությունների, եզրույթների համակարգի, բառիմաստային խմբերի, ոճերի և ժանրերի չափանիշների, պրոֆեսիոնալ թարգմանական կարողությունների մակարդակների ամբողջությունը: Այս ամենը հիմք ընդունելով հանդերձ, հարց է ծագում, թե ինչ կարևորություն ունի «լեզվական անհատի» գաղափարը բուն թարգմանական գործընթացում: Ըստ Ի. Ռեմիսեի՝ թարգմանության մոդելը ենթադրում է եռափուլ գործընթաց, որի մեջ մտնում են հասկացման, թարգմանության և եզրափակիչ՝ թիրախ լեզվով տեքստի ստեղծման (տվյալ լեզվի շարքային և շարահյուսական առանձնահատկությունների հաշվամամբ) փուլերը: Տվյալ գաղափարը թույլ է տալիս ընդհանրացնելու և համապարփակ պատկերացում կազմելու բուն թարգմանական գործընթացի մասին, որի միջոցով ընկալվում են ոչ միայն թարգմանության տեքստի՝ որպես վերջնական արդյունքի, գնահատումը, այլև այդ արդյունքի ձեռքբերման գործընթացում իրականացվող մտածողական/ճանաչողական մեխանիզմների և թարգմանչի՝ մասնագիտական կարողությունների արդյունավետ գործադրման ուղիները և եղանակները:

Ներկայացված տեսությունների և մոտեցումների ուսումնասիրման արդյունքում պարզ է դառնում, որ փոխաբերության խորքային կառուցվածքն իր բնույթով հասկացության է և դրսևորվում է որպես մտածողության և աշխարհընկալման յուրահատուկ արտահայտման միջոց: Փոխաբերության հասկացության էության հաշվառումը մեծ կարևորություն ունի ինչպես գրական երկերի պատկերավոր լեզվի առանձնահատկությունները բացահայտելու, այնպես էլ փոխաբերության՝ այլ լեզվում ճշգրիտ թարգմանական համարժեքի հայտնաբերման խնդրում: Թարգմանության գործընթացում թարգմանիչը լուծում է տարատեսակ ճանաչողական խնդիրներ, որոնցից է նաև փոխաբերությունների թարգմանությունը: Վերջինիս հաջող իրականացման համար թարգմանության գործընթացը ենթադրում է առանձնահատուկ ճանաչողական խնդիրների լուծմանը միտված

¹ Այս եզրույթը վերցրած է Ս. Օլտնի «Խնդրի լուծման գեշտալտ դպրոց» (1984) աշխատությունից: Վերջինում ներկայացված մոտեցման հիմքում ընկած է խնդրի լուծման այն եղանակը, որի միջոցով խնդրի լուծողը խորամուխ է լինում խնդրի կառուցվածքի մեջ, «վերակառուցում» այն՝ լուծումը գտնելու նպատակով: Խնդրի լուծման անհաջողությունը «գործառական կաղապարվածության» արդյունքն է. լուծողը «կենտրոնանում» է տրված խնդրի առաջնային ձևակերպման վրա՝ այդպես էլ չկարողանալով վերակառուցել այն և հասնել լուծման:

² Ծանաչողական ռազմավարությունները հատուկ են առանձին ճանաչողական խնդիրների լուծման համար, և դրանց տիպականացումը կախված է նախ և առաջ խնդրի գործոններից և սուբյեկտի (խնդիրը լուծողի) անհատականությունից: Ի. Սկոտնիկովան առանձնացնում է ճանաչողական ռազմավարությունը սահմանող չորս հիմնական պայմաններ, որոնք են՝ խնդրի տեսակը, խնդրի նորույթի աստիճանը սուբյեկտի համար, լուծման գործողության բնույթը և լուծման փուլը [Либин, Скотникова, 1998:66]:

ռազմավարությունների/մեթոդաբանությունների մշակում ու գործադրում:

Եզրակացություն. Փոխաբերության թարգմանության վերաբերյալ դիտարկված մոտեցումները թույլ են տալիս եզրակացնել, որ փոխաբերությունը, անհատի հասկացության համակարգի տարր լինելով, թարգմանության գործընթացում դրսևորվում է ոչ միայն որպես լեզվական երևույթ, այլև հեղինակի ինքնատիպ մտածողության և երևակայության արտացոլում: Այդ կապակցությամբ փոխաբերության թարգմանության գործընթացում

հաշվի են առվում ոչ միայն վերջինիս արտաքին, լեզվական առանձնահատկությունները, այլև դրա՝ որպես հասկացության համակարգի բաղադրիչի կառուցվածքային, խորքային, ճանաչողական հիմքերը: Փոխաբերությունների թարգմանության վերաբերյալ արդի ճանաչողական մոտեցումները հնարավորություն են տալիս ամբողջական պատկերացում կազմել բուն թարգմանական գործընթացի մասին, որն էլ իր հերթին ակնհայտորեն նշանակալի դերակատարություն ունի ինչպես գրական երկերի թարգմանության, այնպես էլ դրանց ընկալման և մեկնաբանության մեջ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Արիստոտել (1955). «Պոետիկա, հայերեն թարգմանությունը՝ Ա. Կարապետյան», Երևան:
2. Գասպարյան Ս., Մաթևոսյան Ա. (2018) «Տեքստ, փոխաբերականացում, մեկնաբանում», ԵՊՀ հրատարակչություն, Երևան:
3. Black M. (1954–1955). “Metaphor”. Proceedings of the Aristotelian Society. New Series, Vol. 55.
4. Geeraerts D., Cuyckens H. (2007). “The Oxford Handbook of Cognitive Linguistics”. Oxford University Press, Inc.
5. Guldin R. (2016). “Translation as Metaphor”, Routledge Taylor & Francis Group, London and New York.
6. Hermans T. (2004). “Metaphor and Image in the Discourse on Translation. A Historical Survey”. *International Encyclopedia of Translation Studies* vol. 1. Walter de Gruyter, Berlin and New York.
7. Lakoff G, Johnson M. (1980). “Metaphors We Live by”. The University of Chicago Press, Chicago, USA.
8. Mandelblit N. (1995). “The Cognitive View of Metaphor and Its Implications for Translation Theory”. *Translation and Meaning, Part 3*, Maastricht University Press, Maastricht.
9. Richards I. A. (1964). “The Philosophy of Rhetoric”. Oxford

- University Press, New York and London.
10. Ricœur P. (2003), “The Rule of Metaphor: The Creation of Meaning in Language”. Routledge, London and New York.
11. Караулов Ю. (2010). “Русский язык и языковая личность”. Издательство ЛКИ, Москва.
12. Маслова В. (2016). “Введение в когнитивную лингвистику”. Издательство «Флинта», Москва.
13. Ремхе И. (2011). “Языковая личность переводчика и когнитивные особенности переводческого процесса”. *Вестник Челябинского государственного университета* No. 24 (239). Вып. 57, Челябинский государственный университет, Челябинск.
14. Скотникова И. (1998). “Когнитивные стили и стратегии решения когнитивных задач”. В Либин А. (1998). *Стиль человека: психологический анализ*, ППП «Типография наука», Москва.
15. Холодная М. (1998). “Когнитивные стили: парадигма «других» интеллектуальных способностей”. В Либин А. (1998). *Стиль человека: психологический анализ*, ППП «Типография наука», Москва.

REFERENCES

1. Aristotle (1955). “Poetics, Armenian translation by A. Karapetyan”, Yerevan.
2. Gasparyan S., Matevosyan A., “Text, Metaphorization, Interpretation”, YSU publishing, Yerevan.
11. Karaulov Yu. (2010). “Russian Language and Linguistic Identity”. LKI publishing, Moscow.
12. Maslova V. (2016). “Introduction to Cognitive Linguistics”. “Flinta” publishing, Moscow.
13. Remkhe I. (2011). “Translator's Linguistic Identity and Cognitive Peculiarities of Translation Process”. *Chelyabinsk*

- State Bulletin* No. 24 (239). Issue 57, Chelyabinsk State University, Chelyabinsk.
14. Skotnikova I. (1998). “Cognitive Styles and Strategies of Cognitive Problems Solving”. In Libin A. (1998). *Human Style. Psychological Analysis*, “Nauka” printing house PPE, Moscow.
15. Kholodnaya M. (1998). “Cognitive Styles: the Paradigm of “Other” Intellectual Capabilities”. In Libin A. (1998). *Human Style. Psychological Analysis*, “Nauka” printing house PPE, Moscow.

Metaphor Translation in Literary Works through the Prism of Cognitive Linguistics

N. Sargsyan

Abstract. A number of theories from the fields of linguistics, literature, text interpretation and translation have been dedicated to the study of metaphor as both a unique linguistic expressive element and a phenomenon reflecting person's imaginative thinking. The complex structure and essence of metaphor has been studied not only in the domain of linguistics, but also in the fields of psychological, philosophical, cognitive and many other sciences. In the present article we have sought to define the nature and significance of metaphor in human mentality and language. We have also discussed and analyzed the peculiarities, methods and means of the realization of metaphor translation in target language. Metaphor translation supposes a complex mental activity carried out by a translator and the outcome of this activity is to transfer in the most detailed way both conceptual-cognitive specificities and reader-directed artistic impact of the original metaphor to the resultant metaphor of the target language. The present article emphasizes the importance of consideration of cognitive linguistic theories relating to the investigation of the essence and translation of metaphor.

Keywords: metaphor, translation, cognitive linguistics, concept, conceptual system, imaginative thinking, source language, target language, text interpretation.